ՀՀ ԿԳՄՄՆ << Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց >> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՈՒսուցչի համագործակցությունը գործնկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Դպրոց՝ Սերսի հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Նարինե Սարգսյան

Ղեկավար՝ Կ. Օհանեսյան

Վայք 2023

Բովանդակություն

1.Ներածություն…….....…….....2

2. Կրթական բարեփոխումներ և նորարարական մեթոդներ……..4

3.Միջառարկայական կապերի միջոցով գիտելիքների ինտեգրում.....8

4. Գիտելիքների փոխանակման հոգեբանական արմատները.....11

5.Ինչպե՞ս զարգացնել գիտելիքները կիսելու պատրաստակամությունը.....11

6. Ուսուցչին գիտելիքների ձեռքբերման կարողությունների զարգացում.....13

7.Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ, փորձի փոխանակումն.....14

8.Եզրակացություն…….....…….16

9.Գրականության ցանկ…….....….....…17

Ներածություն

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հանրակրթական ծրագրերի ինչպես մշակումը ,այնպես էլ իրականացումը կանոնակարգող առանցքային փաստաթուղթը հանրակրթության պետական չափորոշիչն է:

Հանրակրթության պետական չափորոշիչի առանցքային նշանակություն ունենալը պայմանավորված է հատկապես նրանով, որ հենց դրան համապատասխան են մշակվում և իրականացվում ոչ միայն պետական հանրակրթական ծրագրերը , այլև այլընտրանքային ծրագրերը , քանի որ չափորոշիչի նորմերն ու դրույթները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների համար:

Չափորոոշչի վրա հիմնված ուսումնական մեթոդաբանությունը ուսուցիչներին հնարավորություն է ընձեռնում ավելի ազատորեն դրսևորել իրենց ստեղծագործական կարողությունները ՝ ընտրելու ուսուցման այնպիսի մեթոդներ,որոնք նրանց կողմից արդյունավետ են համարվում չափորոշչային պահանջներին համապատասխանող նպատակներին հասնելու համար:

Չափորոոշիրների վրա հիմնված ուսուցմանը բերաբերվող այս ծրագրի մյուս նշանակալի ձեռքբերումն այն է ,որ ներդրված է հետադարձ կապ ապահովման արդյունավետ մեխանիզմ ,որի շնորհիվ ծրագրի շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքում առավել տեսանելի են դառնում նաև այն բացթողումներն ու դժարությունները , որոնք կարիք ունեն հաղթահարման:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ցանկացած միջավայրում գործընկարային առողջ մթնոլորտը, որը հենված է առողջ համագործակցության, փոխոգնության ու օրինակելի փորձի փոխանցման վրա, անշուշտ խրախուսելի է:

Այդպես է նաև կրթական համակարգում: Առողջ ու արդյունավետ գործընկերային միջավայրի հիման վրա նոր հաղթանակներ գրանցելու հանգամանքով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ուսուցչների արդյունավետ փոխգործակցության կարևորությունը ուսումնական գործընթացն էլ ավելի որակյալ ու հասանելի դարձնելու առումով:

Հետազոտության խնդիրը: Ձևակերպել այն արդյունավետ եղանակներն, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Անձն ամբողջական է: Ուստի և նրա զարգացման ու դաստիրակության պայմանները պետք է նպատակաուղղված լինեն այդ ամբողջականության բոլոր կողմերի զարգացմանը : Դա ձեռք է բերվում աճող մարդուն գործունեության կարևորաագույն տեսակների մեջ ներգրավելու ճանապարհով:

Կրթությունը ՝ որպես համամարդկային արժեք և սոցիալ-մշակութային երևույթ , անձի դաստիրակության իրականացման կարևորագույն գործոն է :Առանձնացվում են <<կրթության>> հասկացության բովանդակային մեկնաբանման հետևյալ տեսանկյունները ՝ կրթությունը որպես համամարդկային արժեք , կրթությունը որպես սոցիալ-մշակութային երևույթ , կրթությունը որպես համակարգ , կրթությունը որպես մանկավարժական գործընթաց և կրթությունը որպես արդյունք:

Կրթությունը նախորդ սերունդների կողմից հաջորդներին սոցիալապես կարևոր փորձի մշակման փոխանցման հասարակայնորեն կազմակերպվող ու նորմավորվող գործընթաց է: Այդ գործընթացն բարդ աստիճանակարգային կառուցվածք , որը բնութագրվում է հատվող բաղադրիչներով,մասնավորապես.

- փորձի (գիտելիքների ու կարողությունների ձևով)յուրացմամբ ,վարքի հատկանիշների դաստիրակությամբ ,ֆիզիկական ու մտավոր զարգացմամբ,
- փոխանցվող մշակույթի այնպիսի հենքային կողմերով,ինրպիսիք են ՝ ճանաչողականը , հոգևորը , բարոյականը , վերափոխիչը (աշխատանքայինը),հաղորդակցականը , գեղագիտականը և ֆիզիկականը , որոնք առանձնացվում են գործունեության կառուցվածքի առավել ընդհանուր բաղադրիչներին համապատասխան:

Լ. Զանկովն ասել է.

<<... Սովորողների զարգացումը տեղի է ունենում ուսուցման ընթացքում: Ուստի գիտելիքների և հմտությունների յուրացման համար նախատեսված դիդակտիկ սկզբունքներն ու պահանջները որոշակի արդյունք են տալիս նաև զարգացման ասպարեզում : Սակայն խնդիրը որևէ արդյոնք ստանալը չէ, այլ ուսուցման առավելագույն արդյունավետության հասնելը դպրոցականի զարգացման համար: Իսկ տվյալ խնդրի իրականացումը պահանջում է ուսումնական գործընթացի հատուկ կշռադատումը և կառուցումը>>:

20-րդ դարի վերջից սկսած գրեթե ողջ աշխարհում տեղի ունեցան կրթական բարեփոխումներ ,որոնք պայմանավորված էին կյանքի պահանջներով: Դրանք հիմնարար նշանակություն ունեն հասարակության զարգացման համար, քանի որ հասարակության զարգացումը , ի վերջո կախված է նաև կրթության բովանդակությունից:

Այսօր հասարակությանը անհրաժեշտ են լավ պատրաստված , գիտական մեծ ներուժ ունեցող մասնագետներ , քանի որ այժմ մենք ապրում ենք գիտության և տեխնոլոգիայի հզոր զարգացման ժամանակաշրջանում , <<տեղեկատվական դարում >> , իսկ նման պարագայում կրթական համակարգի բարեփոխումներն ուղղակի անհրաժեշտ են :

Արդի կրթական բարեփոխումները ենթադրում են.

- աճող սերնդին հաղորդել հիմնարար գիտելիքներ,
- կենսական գիտելիքները զուգակցել գործնական գիտելիքներով,
- զագացնել գիտելիքներն ու տեղեկությունն ինքնուրույն ձեռք բերելու կաողություններ,
- խթանել ստեղծագործական քննադատական , վերլուծական տրամաբանական , ոչ տրամաբանականմտածողությունը,
- ձևավորել հստակ , չծանրաբեռնված կրթադաստիրակչական համակարգ՝ հաշվի առնելով ժամանակակից գիտության պահանջներն ու նվաճումները:

Այսօր ուսուցման արդյունավետության համար անհրաժեշտ է երեք պարտադիր պայման .

1. ուսուցման գործընթացի աշակերտների առավելագույն քանակի ընդգրկման համար ուսուցման միջոցների հարուստ խաղացանկի անհրաժեշտություն,
2. այնպիսի հմտության ձևավորում , որն օժանդակում է ուսուցման միջոցների ճիշտ օգտագործմանը և եղած փորձի հիման վրա ճիշտ որոշումների ընդունմանը,
3. ճիշտ պատկերացում այն մասին , թե ինչպիսի արդյունք ենք ցանկանում ստանալ:

Այս պայմանների առկայության դեպքում նորովի է իմաստավորվում ուսուցրի դերը: Ժամանակի պահանջները թելադրում են , որ ուսուցիչը պետք է կիրառի դասավանդման հետևյալ ռազմավարությունները .

- ուսուցիչը չպետք է թերագնահատի աշակերտների կարողությունները ,ապահովի գիտելիքի մատչելիությունը բոլոր աշակերտների համար ,
- պետք է ահավասար մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ և պաշտպանի նրա շահերը
- պետք է ստեղծագործաբար մոտենա ուսուցման գործընթացին և գերակայությունը տա աշակերտի խրախուսմանը, որն աշակերտին հնարավորություն կտա ընտրություն անել, դրսևորել սեփական հնարավորությունները , մտածել ինքնուրույն և արտահայտել սեփական կարծիքը:

Նոր մեթոդներից է համարվում նաև համագործակցությամբ ուսուցումը,որն աշակերտի մոտ առաջացնում է հաճելի զգացմունքներ և ակտիվացնում է նրանց մտածողությունը: Համագործակցական ուսուցման դեպքում յուրաքանչյուր աշակերտ գիտակցում է , որ ուսուցչի ներկայացված նպատակին հասնելու համար համադասարանցիների հետ համագործակցելն է , այն ենթադրում է փեմայի պատասխանատվություն, զգացման ամրապնդում և միևնույն ժամանկ նպաստում է պակաս ստրեսային,ավելի առողջ, համագործակցության վրա կենտրոնացված ուսումնական մթնոլորտի ստեղծմանը:Ուսուցման այս մեթոդը մարդասիրական ամենանշանակալի ռազմավարություններից մեկն է:

Այն պարունակում է 4 բաղադրամաս.

- դրական փոխհարաբերություններ,
- անհատական փոխպատասխանատվություն,
- անմիջական հարաբերություններ,
- համագործակցության հմտությունների ճիշտ կիրառում և խմբային գնահատում:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Կրթության բարեփոխումներին զուգընթաց կատարելագործվում է ուսուցման ներկա համակարգը, այդ թվում է գիտելիքների հաղորդման և հմտությունների ձևավորման տեխնոլոգիաները:

Հենվելով առարկայական ուսուցման դարերով մշակված և կատարելագործված ծրագրերի վրա, անհրաժեշտ է ինտեգրել ուսումնական գործընթացները, ամրապնդել ,ընդլայնել տարբեր առարկաների փոխադարձ կապը:

Ուսումնական առարկաների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերի վերհանումն ու օգտագործումը հրատապ խնդիր է : Հատկապես այդ ճանապարհով կարելի է սովորողների գիտակցության մեջ ձևավորել աշխարհի ամբողջական պատկերը: Հասկանալի է՝ առանց այդպիսի կապերի ապահովման սովորողների գիտելիքները կլինեին անբավարար , իսկ դասավանդման հարցերն առանձնապես ոչինչ չեին ավելացնի ուսուցման արդյունավետությանը:

Մարդկային գիտելիքներն օրգանապես լրացնում, հարստացնում են միմիյանց և անհրաժեշտ պայմաններ ձևավորում իրականության առավել խոր , համակողմանի ընկալման ու իմաստավորման համար: Միջառարկայական կապեր գոյություն ունեն համարյա բոլոր դպրոցական դասընթացներում:

Միջառարկայական կապերը լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է , որ յուրաքանչյուր թեմա ուսումնասիրվի համակողմանիորեն, տարբեր կապերի բացահայտման տեսանկյունով: Այսպես կարող է իրականանալ ուսուցման ինտեգրումը:

Լ.Ա.Բինը դպրոցական ուսումնական առարկաների՝ որպես ինքնուրույն ծրագրերով սահմանափակվող դիսցիպլինների, տարանջատումը համարում է գոյություն ունեցող առասպել և հիմնավոր ու տրամաբանական փաստարկներով քննադատում այն. <<Ուսումնական առարկաների առանձնացման սկզբունքը խորթ է հենց կյանքին>>: Պարզ ասած՝ սա <<վատ>> ուսուցանելու տեսություն է >>:

Սոցիալական կյանքում թե բնության մեջ չկան առանձնացված առարկաներ, երևույթներ և գործընթացներ, դրանք գտնվում են որոշակի համակարգերի կազմում :Ուստի ամբողջական որևէ երևույթի առանձին կողմի ճանաչումը առանց նրա մյուս կողմերի , չի կարող ամբողջական պատկերացում տալ երևույթի բոլոր դրսևորումների մասին: Ուստի առանձին առարկաները , երևույթները և գործընթացները լրիվ ճանաչելու համար անհրաժեշտ է , որ դրանք դիտվեն տվյալ համակարգի բոլոր մասերի միմյանց հետ ունեցած կապերի և հարաբերությունների մեջ:

Գիտելիքների միավորումը և համադրումը տեղի են ունենում տարբեր եղանակներով: Տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող հասկացությունների միջև հաստատվող առնչություններն ընդունված է անվանել միջառարկայական կապեր:

Կոմենսկին ավելի հանգամանորեն ներկայացրեց միջառարկայական կապերի հիմնախնդիրը՝ փորձելով հիմնավորել դրա իմացաբանական հիմունքները: Միջառարկայական կապերին դիմելը նա գնահատում էր որպես <<գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու>> լավագույն միջոց. <<Այն ամենը , ինչը փոխադարձաբար կապված է , նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի >>:

Ռուս ականավոր մանկավարժ Կ.Դ.Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն կենսագործումը համարում էր արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Ուսուցման ընթացքում գիտելիքների միջև կապերի ստեղծելու անհրաժեշտությունը չի վրիպել նաև հայ մանկավարժ Խ.Աբովյանի ուշադրությունից: Աբովյանն իր մանկավարժական պրակտիկայում լայնորեն օգտագործում էր տարբեր առարկաների միջև առկա բնական տրամաբանական կապերը:

Կորոտովը գրել է . << Եթե ամեն մի գիտություն , ուսումնասիրելով երևույթների որոշակի շրջան , մեզ տալիս է նյութական աշխարհի մի կողմի արտացոլումը, ապա բոլոր գիտությունները միասին տալիս են համեմատաբար լրիվ և համակողմանի արտացոլում>>: Ըստ էության , այդ երևույթը , իր առանձնահատկություններով հանդերձ,դրսևորվում է ուսուցման մեջ, ուր ուսումնական մեկ առարկայի ուսումնասիրումն աշակերտներին պատկերացում է տալիս առարկաների և իրականության

երևույթների մի կողմի մասին , իսկ ուսումնական մյուս առարկաների ուսումնասիրումը ամբողջական պատկերացում է տալիս առարկաների ու երևույթների բոլոր կողմերի մասին :Դա տեղի է ունենում նաև գիտելիքների ինտեգրման և համադրման միջոցով , որը նպաստում է համակարգված գիտելիքների արդյունավետ յուրացմանը:

Մանկավարժական գործընթացում միջառարկայական կապեր ստեղծվում են տարբեր եղանակներով: Օրինակ՝ ուսուցիչը դասի ընթացքումնոր նյութը պատմելիս կամ բացատրելիս աշակերտներին հիշեցնում կամ հարցնում է , թե մյուս առարկաներից իրենք ինչ գիտեն տվյալ երևույթի վերաբերյալ:Ուսուցիչը ,հենվելով աշակերտների հայտնի գիտելիքների վրա , աշխատում է հասկանալի դարձնել նոր նյութը կամ տեղեկատվությունը և ձևավորել ուսումնասիրվող երևույթի համկողմանի ու ոմբողջական պատկերացումը:

Միջառարկայականկապերի շնորհիվ համակարգվում է տարբեր առարկաների ուսուցիչների գործունեությունը: Դրանք նպաստում են ուսումնադաստիրակչական գործընթացի կազմակերպման հիմնական խնդիրների նկատմամբ միասնական մոտեցման ձևավորմանը:

Տարբեր առարկաների միջոցով յուրացված նյութն օգնում է դպրոցականների գիտելիքների համակարգմանը, ամրակայմանը և սովորողների գիտակցության մեջ բնության ու հասարակության երևույթների նկարագրի մշակմանը, այսինքն՝ ամբողջական աշխարհայացքի ձևավորմանը:

Տրամաբանական կապեր են ստեղծվումինչպես տարբեր ուսումնական առարկաների թեմաների միջև, այնպես էլ ներառարկայական և ներդասընթացային նյութերի առումով: Դա տեղի է ունենում այն ժամանակ,երբ նոր նյութն ուսումնասիրելու ժամանակ ուսուցիչն օգտագործում է աշակերտների այն գիտելիքները , որոնք ձեռք են բերվել նախորդ դասարանում և տրամաբանորեն կապվում են նոր գիտելիքների հետ՝ նպաստելով դրանց յուրացմանը: Սակայն այդ բնույթի կապերն ապահովում են ոչ միայն նոր նյութի ընկալումը գիտելիքների միավորման միջոցով , այլև ձեռք բերված տեղեկատվության ընդհանրացումն ու համակարգումը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ցանկացած արարք, այդ թվում՝ մասնագիտական կյանքում, աճում է մոտիվացիայից դրդված: Ներքին մոտիվացիան կապված է գործունեության գործընթացից և բովանդակությունից հաճույք ստանալու հետ, արտաքինը՝ արտաքինից սպասվող օգուտների, պարգևների և «բոնուսների» հետ: Բավականին դժվար է ուժեղացնել գիտելիքների փոխանակման ներքին մոտիվացիան, բացառությամբ բարենպաստ սոցիալական միջավայրի ստեղծման: Դա ենթադրում է վստահություն, աշխատակիցների ինքնավարության ճանաչում, բացություն և զերծ 11 նվաստացուցիչ քննադատությունից: Արտաքին մոտիվացիայի վրա ավելի հեշտ է ազդել՝ կան այնպիսի գործիքներ, ինչպիսիք են բոնուսները, առաջխաղացումները, պաշտոնական ճանաչումը և այլն: Ներքին մոտիվացիան դրական է ազդում անհատի գործունեության վրա գիտելիքների փոխանակման գործում, այն «վարքագծի ամենակարևոր կանխատեսողն է»: Կազմակերպչական մշակույթը, որն աջակցում է մասնագիտական երկխոսությանը, ազդում է ուսուցչի վարքի վրա, սա երկրորդ կանխատեսողն է: Արտաքին մոտիվացիան միայն անուղղակիորեն է ազդում ուսուցիչների միջև գիտելիքների փոխանակման վրա. այն մեծացնում է նրա ակտիվությունը ներքին մոտիվացիայի ամրապնդման միջոցով:

Հաջողակ ուսուցչի «վարպետության դասերը» պահանջում են ինքնամտածողության և «սեփական լռելյայն գիտելիքների էքստերնալիզացիա» հմտություններ:

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՐԳԱՑՆԵԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԿԻՍԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրացնել աշխատողների ինքնավարությունը: Սա նշանակում է ուսուցչին տալ աշխատանքի մեթոդներ ընտրելու ազատություն և նրա որոշումների և առաջադրանքների կատարման եղանակների նկատմամբ խիստ վերահսկողության բացակայություն: Այսօր, սակայն, ռուսական դպրոցում հակառակ ընթացքն է ընթանում. Ուսուցչի ինքնավարությունն ավելի ու ավելի է սահմանափակվում տեսչական մարմինների և տնօրենի վերահսկողության ուժեղացմամբ: Սա խանգարում է աշխատանքին

ընդհանրապես և գիտելիքի փոխանակմանը մասնավորապես: Պրոֆեսիոնալ երկխոսությունը «վերակենդանացնելու» երկրորդ ալգորիթմը հետադարձ կապի ստեղծումն է, որը գործում է մարդու հիմնական հոգեբանական կարիքի միջոցով՝ «ներգրավման անհրաժեշտության»: Հետադարձ կապը «ամրապնդում է անհատի ցանկալի վարքը», քանի որ անմիջական սոցիալական 12 միջավայրն այն ճանաչում է որպես կարևոր: Այլ կերպ ասած, ուսուցիչներին պարբերաբար ցույց տալով, որ գործընկերների հետ գիտելիքների փոխանակումը դպրոցում արժեքավոր է համարվում, կարելի է անուղղակիորեն ուժեղացնել ուսուցիչների փոխգործակցության ներքին մոտիվացիան, կարծում են աշխատանքի հեղինակները: Ներքին մոտիվացիան ուժեղացնելու երրորդ բաղադրատոմսը կապված է այն բանի հետ, որը հայտնի է որպես տրանսֆորմացիոն առաջնորդություն: Այն ներառում է աշխատողների զարգացման շեշտադրում, «ստեղծագործություն»՝ երևակայություն և անկախ մտածողություն օգտագործելու վերաբերմունք, ապագայի հստակ և լավատեսական պատկեր ստեղծելու, ինչպես նաև աշխատողների վրա ազդելու՝ փորձելով նրանց համար օրինակելի լինել: Փաստորեն, այստեղ ուժեղ է կորպորատիվ թիմ կառուցելու տարրը՝ ապագայի ընդհանուր տեսլական, ստեղծագործական փոխազդեցություն և այլն:Վերջապես, կան կադրային որոշումներ, որոնք նպաստում են գիտելիքների փոխանակմանը: Այսպիսով, օրինակ, նոր աշխատակիցներ ընդունելիս իմաստ ունի հաշվի առնել գիտելիքները փոխանցելու և ընկալելու պատրաստակամությունը:

ՈՒՍՈՒՑՉԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Գիտելիքը կիսելու համար ուսուցչի համար կարևոր է ունենալ անձնական փորձ և ձեռք բերել դասավանդման հմտություններ: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր մարտավարությունը, թե ինչպես պահել դասարանի ուշադրությունը, ինչպես ներկայացնել որոշակի թեմա և հետաքրքրել ուսանողներին: Այնուամենայնիվ, խնդիրն այն է, որ հետազոտողները կարծում են, որ նման գիտելիքները «ենթադրյալ» են, և առանց մասնագիտական ինքնամտածողության, առանց այն հասկանալու, երբեմն ուսուցչի համար դժվար է բացահայտել և ձևակերպել իր գիտելիքները: 13 Դպրոցականներին գիտելիքներ փոխանցելը մի բան է, գործընկերներին՝ բոլորովին այլ բան: Նրանց փորձի թարգմանության մոտեցումներն ակնհայտորեն տարբեր են: Փրկության է գալիս Անդրագոգիան՝ մեծահասակների ուսուցման մեթոդները: Սակայն մենթորության ժամանակ պետք է խուսափել սուր հակադրություններից, խորհուրդ են տալիս հոդվածի հեղինակները: Եթե նորեկին դասավանդում է ամենաորակյալ աշխատակիցը, նրանց համար կարող է դժվար լինել ընդհանուր լեզու գտնելը: «Super Pro»-ն միշտ զբաղված է և միշտ չէ, որ կարող է բացատրել աշխատանքի բարդությունները փոքրերին հասանելի լեզվով: Այսպես թե այնպես, դպրոցներում փորձի փոխանակման մշակույթը դաստիարակելու համար մենեջերների ջանքերն են պետք: Այդ թվում՝ և հմտությունների զարգացման վրա՝ ոչ միայն գիտելիքների փոխանցման, այլև գիտելիքների ընկալման համար: Ուսումնական հաստատությունների աշխատողների մանկավարժական որակավորումների ձևավորման և զարգացման ամենաարդյունավետ ուղիներն են այլ ուսուցիչների առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրությունն ու օգտագործումը, նրանց ինքնուրույն մեթոդական աշխատանքը, մանկավարժական ինքնակրթությունը և ուսուցման և դաստիարակության անձնական փորձի վերլուծությունը:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Կազմակերպչական մոդելները հեշտացնում են, բայց չեն երաշխավորում համագործակցությունը: Այն, թե ինչպես են ուսուցիչները ներգրավվում մոդելի մեջ, կարող է փոփոխություն կատարել: Ուսուցիչների անձնական դիրքորոշումն այն մասին, թե արդյոք նրանք «պետք է» կամ «ցանկանում են» մասնակցել կազմակերպչական մոդելին, կարևոր է հաջող համագործակցության համար: Հավասարապես կարևոր է հասկանալ, թե ինչպես արդյունավետ կերպով ներգրավվել գործընկերների հետ համատեղ աշխատանքի մեջ: Ինչպես մյուս հմտությունների դեպքում, մենք համագործակցության ավելի մեծ կարողություն ենք ձեռք բերում՝ պրակտիկայի հնարավորությամբ: Ձեր դպրոցում ուսուցիչների համագործակցությունը նախաձեռնելու կամ վերակենդանացնելու համար փորձեք այս հինգ ռազմավարությունները:

1. Ստեղծեք իսկապես ընդհանուր տեսլական և նպատակներ: Սեփականատիրության մակարդակը, որը նրանք զգում են գործընթացում, ազդում է այն բանի վրա, թե ուսուցիչներն իրականում որքան են ներդրումներ կատարում համատեղ աշխատանքի մեջ: Համատեղ տեսլականը և նպատակները կարող են 9 հանգեցնել սեփականության այդ զգացողությանը: Օրինակ՝ բացահայտեք ձեր թիմի ընդհանուր տեսլականը՝ հոգալու սովորողների և սովորողների ուսման մասին, սահմանեք նպատակներ՝ կապված այդ տեսլականի հետ, քննարկեք, թե ինչպես կարող է թիմի աշխատանքը օգնել հասնել այդ նպատակներին, և հաճախ ստուգեք՝ առաջընթացը գնահատելու համար: Աշխատանքի և թիմի տեսլականի միջև ամուր կապը կարող է օգնել անհատներին տեսնել նպատակը և տեր կանգնել գործընթացին:

2. Զարգացնել համայնքի զգացումը: Իր հիմքում համագործակցությունը հարաբերական է: Ձեր գործընկերների հետ ծանոթանալը, նրանց կրքերը հասկանալը և անձնական մակարդակով շփվելու համար ժամանակ հատկացնելը կարող է օգնել անդամներին ձեռք բերել փոխադարձ հարգանք և նայել ուրիշների մոտ ընկալվող տարօրինակություններին: Համատեղ արժեքների և պարտավորությունների հաստատումը կարող է միավորել խմբին և ապահովել նրանց հավաքական աշխատանքի նպատակը: Ինչպես բոլոր հարաբերությունները, համագործակցային համայնքը ժամանակի ընթացքում զարգանում է և պահպանելու համար աշխատանք է պահանջում:

Վստահությունը ազդում է համատեղ աշխատանքի արդյունավետության վրա: Խմբային պարտավորությունները հարգելը, ինչպիսիք են հանդիպումներին լիարժեք ներկա լինելը և ուրիշների մեջ լավագույնը տեսնելը, օգնում է վստահություն հաստատել և ստեղծել համախմբված համայնք: Համայնքը զարգացնելու այլ ուղիներ ներառում են ավանդույթների հաստատումը, ձեռքբերումները նշելը և անհատական ներդրումների ճանաչումը:

3. Բացահայտել խմբի նորմերը: Եկեք ընդունենք, որ համագործակցությունը երբեմն կարող է անհարմար կամ սթրեսային լինել: Երբ մենք թափանցիկ ենք մեր աշխատանքի և մեր համոզմունքների մասին, մեր գործընկերները կարող են տեսնել մեր սահմանափակումները, ինչպես նաև մեր ուժեղ կողմերը՝ դնելով մեզ խոցելի վիճակում: Գործընկերների հետ կիսվելը և վստահելը պահանջում է քաջություն և խոնարհություն: Վստահության մթնոլորտը կարող է օգնել ստեղծել անվտանգ միջավայր, որն անհրաժեշտ է բաց հաղորդակցության համար:

Խմբային նորմերի բացահայտումն ու հաստատումը նույնպես կարող է օգնել զարգացնել այդ անվտանգ միջավայրը: Նորմերը կարող են ներառել դերերի և պարտականությունների սահմանում, միջանձնային հաղորդակցության համար արձանագրությունների օգտագործում և ժամանակի կառավարման պարամետրերի ուրվագծում: Թիմի յուրաքանչյուր անդամի ուսուցման ոճերին, կարիքներին, հետաքրքրություններին, վախերին և հույսերին ծանոթանալու համար ժամանակ հատկացնելն օգնում է ձևավորել նորմերը, թե ինչպես է խումբը ներգրավվում ընդհանուր աշխատանքում: Օգտագործեք քննարկում և երկխոսություն: Անկախ նրանից, թե նրանք ինտեգրում են ուսումնական պլանը, վերլուծում են տվյալները կամ ուսումնասիրում նոր պրակտիկա, թիմերը պետք է հասկանան երկխոսության և քննարկման դերերն ու տարբերությունները: Նրանք հավասարապես կարևոր են խմբային գործընթացի համար: Քննարկումը առաջ է տանում զրույցը: Քննարկման ընթացքում անհատները հայտարարում են իրենց կարծիքները՝ կոնսենսուս ստեղծելու կամ որոշումներ կայացնելու նպատակով:

Եզրակացություն

Պրոֆեսիոնալիզմի հիմնական հատկանիշներից մեկը շարունակական ինքնազարգացման պահանջարկն է: Սակայն, ինքնազարգացման ուղիները և միջոցները անհատական են, պայմանավորված մեզանից յուրաքանչյուրի անհատական հատկանիշներով և կարիքներով: Մասնագիտական զարգացումը ենթադրում է ուսուցիչների գործունեության բարելավում, ինչին կարելի է հասնել լավ պլանավորված և խելամտորեն իրականացված միջոցառումներով ինչպես անհատական, այնպես էլ կազմակերպչական մակարդակում: Իմ հետազոտական աշխատանքում գալիս եմ ընդհանուր եզրահանգման, որ ուսուցիչը իր մասնագիտական աճը պետք է յուրաքանչյուր օր կատարելագործի՝ նորը, նորամուծությունները հեշտությանբ կարողանա սովորել, կիրառել և՛ 20 առարկայական և՛ կյանքի հմտությունները աշակերտին մատչելի ձևով սովորեցնելու գործընթացում: Մեր գործող օրենսդրությունն էլ որոշակի կարգավորում է տալիս ուսուցիչների փորձի փոխանակման գործընթացին: Ուսուցչական մանկավարժական խորհրդի նիստերում յուրաքանչյուր ուսումնական տարի ուսուցիչները պետք նվազագույնը մեկ զեկույցով հանդես գան իրենց մասնագիտական խմբի ուսուցիչներին ներկայացնելով կամ իրենց կատարած հետազոտությունները, կամ էլ առաջավոր մանկավարժական փորձառությունը: Թեմայի ընտրությունը որոշվում է մանկավարժական խորհրդի օգոստոսյան նիստի ժամանակ՝ նոր ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատումով: Ուսումնական հաստատությունների աշխատողների մանկավարժական որակավորումների ձևավորման և զարգացման ամենաարդյունավետ ուղիներն են այլ ուսուցիչների առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրությունն ու օգտագործումը, նրանց ինքնուրույն մեթոդական աշխատանքը, մանկավարժական ինքնակրթությունը և ուսուցման և դաստիարակության անձնական փորձի վերլուծությունը: Առանց ուսուցիչների համագործակցության դպրոցում փոփոխություններն անհնարին են:

Գրականության ցանկ

1. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014.

2. Agarwal, Pooja K. Powerful Teaching. Wiley. Kindle Edition.

3. Sherrington, Tom. Rosenshine's Principles in Action, John Catt Education, 2019

4. Taylor, K& Rohrer, D., "The Effects of Interleaved Practice", Applied Cognitive Psychology 24: 837–848 (2010).

5. Willingham, Daniel T. Why Don't Students Like School?: A Cognitive Scientist Answers Questions About How the Mind Works and What It Means for the Classroom. Wiley. Kindle Edition. 6.Ուսումնական մասնագիտական միջավայր, օժանդակ ձեռնարկ, 22

7.Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն, 2008 Արդյունավետ ուսուցում, Տեսությունը և պրակտիկան, Քննությունների ազգային կենտրոն, 2010

8.Երեխային կողմնորոշված դպրոցի ուղեցույց, Գորգաձե Ս., Ձանաշիա Ս., Քաղաքացիական կրթության ինստիտուտ, 2012

9.Սովորենք միասին, Ներառական կրթություն, Թ. Պաճկորիա (խմբ.),

10Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն, 2008 11.Ուսուցչի մասնագիտական չափորոշչի ուղեցույց, Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն, 2014